ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԻԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հարգելի պարոն նախարար, հարգելի գործընկերներ, Ձեզ է ներկայացվում հանրապետության գյուղատնտեսության ոլորտի 2014 թ-ի առաջին կիսամյակի արդյունքների և առաջիկա խնդիրների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն:

2014 թվականի անցած ժամանակահատվածում գյուղատնտեսության ոլորտում իրականացվող քաղաքականությունը հիմնականում նպատակաուղղվել է առկա ռեսուրսային ներուժի օգտագործման մակարդակի բարձրացմանը, ոլորտի տնտեսավարողների համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, ոլորտում օգտագործվող կարևորագույն նյութական ռեսուրսների և վարկերի մատչելիության բարձրացմանը, իրացման խնդրի մեղմմանը և այլ առաջնահերթ խնդիրների լուծմանը:

Ըստ պաշտոնական վիճակագրության տվյալների գյուղատնտեսությունում ընթացիկ տարվա անցած ամիսներին, չնայած բնական աղետների պատճառած վնասների, ընդհանուր առմամբ ոլորտում առկա են դրական տեղաշարժեր: 2014 թվականի հունվար-մայիս ամիսների գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 160.8 մլրդ դրամ, որը 5.4 %-ով գերազանցում է նախորդ տարվա մակարդակը, ընդ որում բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերում աճը համապատասխանաբար կազմել է 8.3 և 4.7 %:

Ընթացիկ տարվա կարևոր ձեռքբերումներից է վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացումը, ըստ օպերատիվ տվյալների ցանքատարածությունները գերազանցել են նախորդ տարվա մակարդակը շուրջ 15.0 հազ. հեկտարով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված ձեռքբերումները հանրապետության գյուղատնտեսությունում տնտեսավարողների քրտնաջան աշխատանքի հետ մեկտեղ արդյունք են նաև ոլորտում իրականացված մի շարք պետական ծրագրերի: Մասնավորապես, ըստ ոլորտների կատարվել են հետևյալ աշխատանքները:

<u>Բուսաբուծության ճյուղում</u>

Նախարարության պատասխանատու աշխատակիցների մասնակցությամբ 2014 թվականի սկզբին հանրապետության բոլոր մարզպետարաններում կայացել են հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են գյուղատնտեսական մշակաբույսերի կանխատեսվող ցանքատարածությունների, համախառն բերքի,կենդանական ծագման մթերքների և իրականացվող ծրագրերի վերաբերյալ խնդիրներ:

Ցանքատարածությունների ավելացման արդյունքում վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը կազմել է 74.3 %, նախորդ տարվա 71.0 %-ի դիմաց:

Մասնավորապես, ոլորտում իրականացվել են հետևյալ հիմնական ծրագրերը:

<<ՀՀ 2010-2014թթ. ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման>> ծրագրի շրջանակներում 2014 թվականի բերքի համար 2013 թվականին աշնանացանի ցանքեր իրականացնելու նպատակով ՌԴ-ից ներկրվել է աշնանացան

ցորենի 440 տոննա էլիտային վերարտադրության սերմացու, ինչպես նաև ծրագրի պայմաններով շահառուներից հետ է վերադարձվել և գնվել է 3809 տոննա առաջին վերարտադրության աշնանացան ցորենի սերմացու: Բավարարվել է մարզերից ստացված հայտերի ամբողջ պահանջարկը: Ծրագրի իրականացումը հնարավորություն տվեց ընթացիկ տարվա բերքի համար աշնանացանի տարածքները հասցնել 96.1 հազ. հեկտարի, նախորդ տարվա 90.3 հազ. հեկտարի դիմաց:

Գարնանացան մշակաբույսերի բարձր վերարտադրության սերմերի ապահովվածության մակարդակի բարձրացմանն է ուղղվել <<ՀՀ 2014 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման>> ծրագիրը, որի շրջանակներում ՌԴ-ից հանրապետություն է ներկրվել 1906.3 տոննա գարնանացան գարու առաջին վերարտադրության, 168.35 տոննա՝ կապույտ առվույտի, 169.96 տոննա՝ կորնգանի և 23.44 տոննա՝ եգիպտացորենի սերմացու, իսկ տեղական սերմարտադրողից գնվել է 150 տոննա գարնանացան գարու էլիտային վերարտադրության սերմացու: Ծրագրի իրականացմանն է ուղղվել 1 միլիարդ 218 միլիոն դրամ:

Սերմացուի 1 կիլոգրամը հողօգտագործողներին հատկացվում է պետության կողմից ձեռք բերված արժեքից 35-50 % ցածր գներով: Ծրագրի իրականացման ընթացքում ՀՀ մարզերում վճարունակ պահանջարկի բացակայության պատճառով իրացվել է ներկրված սերմացուի շուրջ 39 %-ը: Մնացած սերմացուն հողօգտագործողներին իրացվելու է 2015 թվականի գարնանը:

<<ՀՀ աշնանացան ցորենի սերմնաբուծության, բարձր վերարտադրության սերմերի արտադրության զարգացման>> ծրագրի շրջանակներում 2012-2013 թվականներին հացահատիկի սերմնաբուծությամբ և սերմարտադրությամբ զբաղված 12 տնտեսավարողների յուրաքանչյուր տարի տրամադրվել է 20 ական տոննա սուպերէլիտային վերարտադրության սերմացու, բերքահավաքից հետո 1:2 փոխհարաբերությամբ էլիտային վերարտադրության սերմացու վերադարձնելու և շահառուներից գնումներ կատարելու պայմանով:

Գարնան գյուղատնտեսական աշխատանքների հաջող իրականացման համար կարևոր նախադրյալներից է հանքային պարարտանյութերի մատչելիության խնդրի լուծումը, վերջինիս է ուղղվում **<<Հողօգտագործողներին 2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության>>** ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 33822 տոննա ազոտական, 2645 տոննա ֆոսֆորական և 1619 տոննա կալիումական պարարտանյութեր և հանրապետությունում առկա 700.6 տոննա ազոտական պարարտանյութի հետ միասին սահմանված, շուկայականից էականորեն ցածր գներով հատկացնել հանրապետության հողօգտագործողներին: Ընդ որում, ֆոսֆորական և կալիումականն պարարտանյութերը վերջին տարիներին ներկրվում են առաջին անգամ:

Պարարտանյութերը վաճառվելու են շուկայականից 40-50 %-ով ցածր, հետևյալ գներով՝ 1 պարկ ազոտականը՝ 6000, ֆոսֆորականը՝ 7000 և կալիումականը՝ 7000 դրամով, ներառյալ տեղափոխման ծախսերը:

Ծրագրի իրականացմանն է ուղղվել 1 միլիարդ 829.7 միլիոն դրամ սուբսիդիա:

Ընթացիկ տարվա հուլիսի 2-ի դրությամբ մարզերում իրացվել է 26492 տոննա ազոտական, 909 տոննա ֆոսֆորական, 547 տոննա կալիումական պարարտանյութեր:

Գյուղատնտեսական աշխատանքների ագրոտեխնիկական ժամկետներում իրականացման համար կարևորվում է <<**Հողօգտագործողներին 2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության**>> ծրագիրը: Ծրագրի շրջանակներում հանրապետության հողօգտագործողներին գյուղական համայնքներում տրամադրվելու է 17 միլիոն 640 հազար լիտր դիզելային վառելանյութ, 1 լիտրը 350 դրամ՝ շուկայականից 25-26 %-ով ցածր գնով, ներառյալ տեղափոխման ծախսերը:

Ծրագրի իրականացմանն է ուղղվել 1 միլիարդ 260 միլիոն դրամ սուբսիդիա:

Ընթացիկ տարվա հուլիսի 2-ի դրությամբ մարզերում իրացվել է 6 մլն 520.9 հազար լիտր դիզելային վառելանյութ:

Նշված ռեսուրսների ներկրումները և բաշխումներն ընթացքի մեջ են և այն ծրագրերով կավարտվի մինչև 2014 թվականի նոյեմբերի 1-ը:

<<**2010-2014 թվականների ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման**>> ծրագրի շրջանակներում 2014 թվականին աշնանացանի համար նախատեսված է ՀՀ մարզպետարաններից ներկայացված նախնական հայտերի հիման վրա տեղական սերմարտադրողներից գնել մինչև 3300 տոննա աշնանացան ցորենի էլիտային վերարտադրության սերմացու, որը կհատկացվի ՀՀ մարզերի 7 և ավելի հեկտար հողատարածք ունեցող շահառուներին՝ 1:2 փոխհարաբերությամբ աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու հետ վերադարձնելու պայմանով:

Նախատեսվում է նաև ծրագում նախորդ տարի ընդգրկված շահառուների կողմից հետ վերադարձվող և գնվող աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուն հատկացնել ՀՀ մարզպետարաններին, որոնք կտրամադրվեն մինչև 3 հա հողատարածքի վրա ցանք կատարել ցանկացող հողօգտագործողներին՝ 1:2 փոխհարաբերությամբ 80 դրամ (160 դրամ) հաջորդ տարի բերքահավաքից հետո հետ վերադարձնելու պայմանով:

Հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի երաշխավորված բերքի ապահովման և կայուն բուսասանիտարական վիճակի ստեղծման համար կարևորվում է <<**Բույսերի պաշտպանության միջոցառումների ծրագիրը**>>: 2014 թվականին պայքարի միջոցառումներ են իրականացվել հետևյալ բաղադրիչներով՝

- **Պայքար կրծողների դեմ.**

այս բաղադրիչով 2014 թվականի առաջին կիսամյակում ՀՀ մարզերին հատկացվել է 1444.3 կգ ցինկի ֆոսֆիդ, որով պայքար է իրականացվել ավելի քան 12.0 հազ. հա առավել վարակված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում:

- **Պայքար անտառի վնասատուների և հիվանդությունների դեմ.**

2014 թվականի առաջին կիսամյակում հանրապետության անտառներում կատարված անտառ-պաթոլոգիական մոնիթորինգի հիման վրա պայքարի աշխատանքներ են իրականացվել անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ՝

հանրապետության Արագածոտնի, Կոտայքի, Վայոց ձորի մարզերում պայքարի աշխատանքներ են իրականացրել 6300 հա անտառային տարածքներում:

Պայքարի աշխատանքներ են իրականացվել նաև մորեխների դեմ:

Նախարարության ընթացիկ տարվա կարևորագույն խնդիրներից է եղել Արարատյան հարթավայրում և նախալեռնային գոտում մորմազգի մշակաբույսերի ցեցի դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների կազմակերպումը: Աշխատանքներ են տարվել **կարտոֆիլի ցեց և լոլիկի ականող ցեց** վնասատուների դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների կազմակերպման նպատակով ֆերոմոնային թակարդների օգնությամբ մոնիթորինգի իրականացման և պայքարի աշխատանքների կատարման ուղղությամբ:

Ձեռք են բերվել 2500 հատ լոլիկի ականող ցեցի և 400 հատ կարտոֆիլի ցեցի ֆերոմոնային թակարդներ և օժանդակ նյութեր:

ՀՀ Արարատի և Արմավիրի մարզպետարաններից ստացված կարտոֆիլի, լոլիկի, սմբուկի և պղպեղի ցանքատարածությունների վերաբերյալ տեղեկատվության հիման վրա՝ 191 համայնքների նշված մշակաբույսերի դաշտերում, սածիլանոցներում ու դրանց հարակից տարածքներում տեղակայվել են ֆերոմոնային թակարդներ:

Տրամադրված խորհրդատվության արդյունքում հողօգտագործողների կողմից իրականացված պայքարի համալիր միջոցառումների շնորհիվ զգալիորեն նվազել է վաղահաս կարտոֆիլի բերքին ցեցի կողմից հասցված վնասը, ավելացել արտադրության ծավալները:

Մասնագետների կողմից դիտարկումները և խորհրդատվության տրամադրումը կշարունակվի մինչև հոկտեմբեր:

Գյուղատնտեսական մշակաբույսերի երաշխավորված բերքի ստացման համար կարևոր է համարվել <<**Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման ծրագիրը**>>, որի շրջանակներում 2014 թվականի առաջին կիսամյակում ստուգվել է գյուղատնտեսական մշակաբույսերի 6035,0 տոննա տարբեր մշակաբույսերի սերմեր: Ծրագրի իրականացումը հնարավորություն է տալիս սորտափորձարկումների միջոցով ընտրել և գյուղացիական տնտեսությունների համար երաշխավորել համալիր լաբորատոր փորձաքննության ենթարկված սերմեր, բույսերի նոր, արդյունավետ սորտեր, որոնց օգտագործումը կապահովի բարձր և կայուն բերքատվություն, որակյալ արտադրանք:

Ագրոտեխնիկական պահանջներով պարարտանյութերի օգտագործման նպատակով և երաշխավորված բերքատվության ապահովման նախադրյալների ստեղծման համար կարևորվում է <<**Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծրագիրը**>>: Վերջինիս շրջանակներում 2014 թվականի համար նախատեսված է հետազոտել 171 համայնքների շուրջ 92.0 հազ. հա հողատարածք, որից առաջին կիսամյակում հետազոտվել է 50 համայնքի 29358 հեկտար հողեր: Փորձաքննության արդյունքների հիման վրա կազմվել է 40 համայնքների ագրոքիմիական քարտեզներ և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրեր, իսկ 10 համայնքներինը նախապատրաստվում են: Մշակվում է պարարտանյութերի խնայողաբար և արդյունավետ օգտագործման վերաբերյալ

գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ, որոնք տրամադրվում են համապատասխան համայնքներին:

Մշակվել է Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական հողօգտագործողներին 2015-2017 թվականներին հասցեական պետական աջակցության տրամադրման ծրագիրը, որով նախատեսված է ՀՀ մարզերի բարձր լեռնային և սահմանամերձ համայնքներում գյուղատնտեսությամբ զբաղվող ֆիզիկական, իրավաբանական անձանց սեփականության և վարձակալության իրավունքով պատկանող մշակովի հողատարածքների վրա փաստացի ցանված հացահատիկային մշակաբույսերի, իսկ ՀՀ բոլոր համայնքներում՝ գարնանը կատարված եգիպտացորենի ցանքատարածությունների յուրաքանչյուր հեկտարի համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից անհատույց հատկացնել 40.0 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում միջոցառումներ են ձեռնարկվել բնական աղետների հետևանքների մեղմման ուղղությամբ:

2014թ. ապրիլի 1- ից մայիսի 30-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Վայոց ձորի, Տավուշի և Լոռու մարզերում տեղի ունեցած ցրտահարության հետևանքով առավել տուժած հողօգտագործողներին հատկացվել են 85 մլն դրամ արժեքով լոլիկի՝ 292,2 կգ, վարունգի՝ 566,5 կգ, ձմերուկի՝ 1117,1 կգ և սեխի՝ 190,5 կգ սերմացուներ, որով հնարավոր է ցանք կատարել 3335,1 հա տարածության վրա: 2014թ. մայիսի 24-ին տեղացած կարկուտի հետևանքով ՀՀ Լոռու մարզի 11 համայնքների հողօգտագործողներին օգնություն ցուցաբերելու նպատակով 95,25 տոննա ազոտական պարարտանյութ և 7620 լիտր դիզելային վառելանյութ, որոնց արժեքը(շուրջ 14 մլն դրամ) կվճարվի մարզպետարանի կողմից՝ հրատապ խնդիրների լուծման համար ՀՀ պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցներից:

<u>Անասնաբուծության ճյուղ</u>

2013 թվականին անասնաբուծության ոլորտում կատարված դրական տեղաշարժերը հուսալի նախադրյալներ ստեղծեցին 2014 թվականի առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ արձանագրելու բարձր ցուցանիշներ թե անասնագլխաքանակի և թե անասնաբուծական մթերքների արտադրության և իրացման ծավալների ավելացման առումով:

Ըստ օպերատիվ տվյալների, ընթացիկ տարվա առաջին կիսամյակի ընթացքում հանրապետությունում տավարի գլխաքանակն ավելացել է 2.5 %-ով և կազմել է 694.5 հազ. գլուխ, ոչխարների և այծերի գլխաքանակն ավելացել է 5.0 % և կազմել է 753.8 հազ. գլուխ, թռչունների գլխաքանակն ավելացել է 2.2 % և կազել է 5 մլն գլուխ, բացառությամբ խոզերի գլխաքանակից, որը նվազել է 1.5 %-ով:

2014 թվականի առաջին կիսամյակում արձանագրվեց կենդանական ծագման մթերքների արտադրության զգալի աճ: Այսպես, 2014 թ-ի հուլիսի 1-ի դրությամբ հանրապետությունում արտադրվել է շուրջ 36 հազ. տոննա միս, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է գրեթե 10 %-ով:

Կաթի արտադրությունը կազմել է 402 հազ. տոննա, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 7 %-ով, իսկ ձվի արտադրությունը կազմել է 370 մլն, որը նախորդ տարվա ցուցանիշից ավել է 5.5 %:

Կարևորելով անասնաբուծության ոլորտում տոհմասելեկցիոն աշխատանքների շարունակությունը և կերի բազայի ամրապնդումը՝ նախարարությունը մշակել է <<ՀՀ կերային մշակաբույսերի ցանքատարածությունների ընդլայնման և գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման միջոցառումների կիրառմամբ անասնաբուծության խթանման>> ծրագրի նախագիծը, որը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա ներդրողներին լիարժեք և համակողմանի տեղեկատվություն տրամադրելու նպատակով մշակվել են <<ՀՀ որոշ մարզերում ոչխարաբուծական տնտեսության հիմնադրման (մինչև 50 հազար գլուխ)>> և <<ՀՀ տարեկան 5 հազար տոննա արտադրողականությամբ թռչնամսի արտադրության ձեռնարկության հիմնադրման>> գործարար ծրագրեր:

Ձկնաբուծություն

2014 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում ապրանքային ձկան արտադրությունը կազմել է 7800 տոննա, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է շուրջ 30 %-ով, իսկ ձկան արտահանման ծավալը կազմել է 1140 տոննա, որը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ ավել է 250 տոննայով կամ 28 %-ով:

Արարատյան հարթավայրի ձկնաբուծարանների կողմից օգտագործվող արտեզյան ջրերի արդյունավետ օգտագործման համար ջրի խնայողության կիսափակ և փակ ջրամատակարարման համակարգերի ներդրման նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը մշակել է մի շարք իրավա-օրենսդրական փաստաթղթերի նախագծեր:

Արարատյան հարթավայրի 1 կամ 2 ձկնաբուծարանում ջրի խնայողական համակարգի ներդրման համար պիլոտային ծրագիր իրականացնելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության խնդրանքով փորձագետներ են ժամանել Դանիայից, Գերմանիայից, Իտալիայից և <<Եվրոֆիշ>> միջազգային կազմակերպությունից, որոնց կողմից 2 տնտեսությունների համար մշակվել է նախագիծ և կազմվել նախահաշիվ: Ներկայումս, ֆինանսավորման նպատակով աշխատանքներ են տարվում միջազգային դոնոր կազմակերպությունների հետ:

<u>Անասնաբուժության ոլորտ</u>

Հանրապետությունում բրուցելոզով հիվանդ կենդանիներին բացահայտելու նպատակով ընթացիկ տարվա առաջին կիսամյակում ախտորոշվել են շուրջ 363 հազար գլուխ խոշոր և 339 հազար գլուխ մանր եղջերավոր կենդանիներ: Ախտորոշման արդյունքում հետազոտված խոշոր եղջերավոր կենդանիներից 3074 գլուխը կամ 0,85 %-ը և մանր եղջերավոր կենդանիներից 1582 գլուխը կամ 0,47 %-ը հանդիսացել են բրուցելոզով հիվանդ կենդանիներ:

Հարկ է նշել, որ հիվանդության ամենաբարձր ցուցանիշները խոշոր եղջերավոր կենդանիների շրջանում արձանագրվել են ՀՀ Կոտայքի (1453 գլուխ կամ նմուշառված կենդանիների 4,5 %-ը), ՀՀ Արմավիրի (374 գլուխ կամ 1,5 %-ը), ՀՀ Արագածոտնի (482 գլուխ կամ 1,0%) և ՀՀ Վայոց ձորի (121 գլուխ կամ 1,0%-ը) մարզերում, մինչդեռ մյուս մարզերում, հիվանդ կենդանիների տեսակարար կշիռը 1%-ից էլ ցածր է, իսկ ՀՀ Տավուշի մարզում բրուցելոզով հիվանդ կենդանի չի հայտնաբերվել:

2014 թվականի հուլիսի 10-ի դրությամբ բրուցելոզով հիվանդ բոլոր մանր եղջերավոր կենդանիներն ենթարկվել են սանիտարական սպանդի, իսկ 3074 խոշոր եղջերավոր կենդանիներից սպանդի են ենթարկվել 3068 գլուխը:

Բրուցելոզ հիվանդության տարածվածության վերաբերյալ կատարված վեր-լուծությունները ցույց են տալիս, որ թեև հիվանդ կենդանիների տեսակարար կշիռը մոտ է նախորդ տարիների միջին ցուցանիշներին, այնուամենայնիվ մտահոգիչ է ՀՀ Կոտայքի մարզում տիրող իրավիճակը, քանզի հանրապետությունում հայտնաբերված հիվանդ կենդանիների ավելի քան մեկ երրորդը կենտրոնացված է այս մարզում, իսկ մարզի հիվանդ կենդանիների ավելի քան 70%-ը՝ Գեղաշեն համայնքում:

ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքում ընթացիկ տարվա առաջին կիսամյակում նմուշառված 2074 խոշոր եղջերավոր կենդանիներից 937 գլուխը կամ 45,2%-ը հանդիսացել են հիվանդ կենդանիներ, որոնցից 931 գլուխը ենթարկվել է հարկադիր սպանդի: Պետք է նշել, որ Գեղաշեն համայնքի նմուշառված կենդանիների արյան լաբորատոր փորձաքննության արդյունքները ստանալուն պես նախարարությունը անմիջապես համապատասխան գրությամբ դիմել է ՀՀ Կոտայքի մարզի մարզպետին՝ հիվանդության տարածումը կանխելու նպատակով անհապաղ քայլեր ձեռնարկելու առաջարկությամբ: Որին հաջորդել է Գեղաշեն համայնքում կարանտին սահմանելու մասին մարզպետի որոշումը: Ներկայումս համայնքում տեղակայված են կարանտին հսկողության կետեր և իրականացվում է շուրջօրյա հերթապահություն:

Այժմ, ընթանում է կարանտին հսկողության 2-րդ փուլը, որի ընթացքում նմուշառվել է 160 կենդանի, որոնցից 32-ը հանդիսացել են հիվանդ կենդանիներ:

Անասնապահության ճյուղի կայունության և ազգաբնակչությանն առողջության համար անվտանգ անասնապահական ծագման մթերքներով ապահովման գործում կարևորվում է <<**Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում**>> ծրագիրը, որի շրջանակներում անասնահակահամաճարակային միջոցառումների իրականացման հա-մար ձեռք են բերվել ընդհանուր առմամբ 8.7 մլն դոզա բուժկանխարգելիչ միջոցներ:

Համայնքային անասնաբույժ-մասնագետների կողմից իրականացվել են խոշոր եղջերավոր կենդանիների բրյուցելոզ, տուբերկուլյոզ, սիբիրախտ, պաստերելյոզ, դաբաղ, էմկար, հիվանդությունների նկատմամբ՝ 2.97 մլն, մանր եղջերավոր կենդանիների բրուցելյոզ, դաբաղ, սիբիրախտ, բրադզոտ հիվանդությունների նկատմամբ՝ 1.72 մլն, խոզերի դասական ժանտախտ հիվանդության նկատմամբ՝ 332.3 հազ., թռչունների կեղծ ժանտախտ հիվանդության նկատմամբ՝ 1.03 մլն անասնահակահամաճարակային միջոցառումներ և մեղուների վարրուատոզ հիվանդության նկատմամբ՝ 223.2 հազ. բուժկանխարգելիչ միջոցառումներ:

Անասնապահության զարգացման համար առանձնակի կարևորվում է <<**Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունա-**

կության>> ծրագրի իրականացումը: Ծրագրի շրջանակներում 2014 թվականի առաջին կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները.

ՀՀ 6 մարզի (Արագածոտն, Շիրակ, Լոռի, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք) 23 համայնքում հիմնադրվել են «Համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ ու «Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» հանձնաժողովներ:

4 համայնքում ավարտվել են արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները (12 կմ ջրագիծ, 7 հատ խմոց):

10 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները գտնվում են իրականացման փուլում (27 կմ ջրագիծ, 33 հատ խմոց):

25 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել են շուրջ 61 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում 14 անիվավոր տրակտոր և 47 միավոր այլ գյուղգործիքներ:

ՀՀ Սյունիքի մարզի Խնձորեսկ, ՀՀ Արագածոտնի մարզի Արտաշավան և ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքներում իրականացվում են անասնաբուժական սպասարկման կենտրոնների շինարական աշխատանքներ:

<u>Ագրովերամշակման ոլորտ և իրացում</u>

Ընթացիկ տարում պտուղբանջարեղենի մթերումների գործընթացի կազմակերպման նպատակով իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

Կատարվել է պտուղբանջարեղենի մթերումների կանխատեսվող ծավալների մոնիթորինգ, ըստ որի 2014 թվականի մթերման պահանջարկը կազմում է շուրջ 75.3 հազ. տոննա բանջարեղեն և 29.0 հազ. տոննա պտուղ: Վերամշակող ընկերությունների կողմից պտղի և բանջարեղենի մթերումների պահանջարկը շուրջ 50.7 հազար տոննայով գերազանցում է նախորդ տարվա ընթացքում կատարված փաստացի մթերման ծավալները:

Պտուղբանջարեղենի մթերման կանխատեսվող ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ մարզպետարաններին և նախարարության գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններին՝ մարզի գյուղացիական տնտեսություններին տեղեկացնելու, վերջիններիս ու վերամշակող ընկերությունների միջև հումքի գնման պայմանագրերի կնքման գործընթացի կազմակերպման հարցում աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Սկսվել են ընթացիկ տարվա պտուղբանջարեղենի և խաղողի բերքի գնման նպատակով գյուղացիական տնտեսությունների և վերամշակող ընկերությունների միջև պայմանագրերի կնքման գործընթացը:

2014 թվականի հունիսի 26-ի դրությամբ կնքվել է 11965 պայմանգիր, որից 11381-ը՝ խաղողի և 584-ը՝ պտուղբանջարեղենի գնման: Պայմանագրերի շրջանակներում գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է 112.5 մլն դրամ կանխավճար և 675.1 մլն. դրամի բուժանյութեր և այլ օժանդակություն:

Պայմանագրերի կնքման գործընթացը շարունակվում է:

Սկսվել են բանջարեղենի մթերումները և 2014 թվականի հուլիսի 11-ի դրությամբ մթերվել է ավելի քան 515.8 տոննա բանջարեղեն և 670.7 տոննա պտուղ:

Պտուղբանջարեղենի և կաթի վերամշակման ոլորտում առկա խնդիրների համատեղ լուծման, ոլորտների գործունեության բարելավման ու թափանցիկության, ինչպես նաև գյուղատնտեսական հումքի մթերումների կազմակերպման հնարավոր խոչընդոտների հաղթահարման նպատակով սույն թվականի փետրվարի 26-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում ստորագրվել են համագործակցության հուշագրեր՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների ու Կաթնամթերք արտադրողների միությունների միջև:

Գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված պտղի, բանջարեղենի և խաղողի իրացման նպատակով մթերումների նախապատրաստական աշխատանքներին զուգահեռ աշխատանքներ են տարվում նաև դրանց արտահանման և վաճառքի աջակցության ուղղությամբ:

Այդ նպատակով սկսվել է պտուղբանջարեղենի արտահանումների և խողողի մթերումների կանխատեսվող ծավալների մոնիթորինգի աշխատանքները, որի ամբողջական արդյունքները պատրաստ կլինեն առաջիկայում:

2014 թվականի հուլիսի 7-ի դրությամբ հանրապետությունից արտահանվել է 25.3 հազ. տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշը գերազանցում է շուրջ 11 %-ով:

Հունիսի 8-ից վերսկսվել են Երևան քաղաքի Կասյան փողոցում գործող գյուղատնտեսական մթերքների տոնավաճառի աշխատանքները, իսկ պահանջարկի առկայության դեպքում կգործարկվեն նաև այլ վայրերում:

Գյուղատնտեսության ոլորտի առջև ծառացած խնդիրների լուծման կարևորագույն գործիքներից է <<**Գյուղատնտեսությունում տնտեսավարողների վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի**>> իրականացումը:

Ծրագիրն ընդգրկում է հանրապետության անբողջ տարածքը: Վարկերը տրամադրվում են հայկական դրամով՝ 14 % տոկոսադրույքով, իսկ առավել կարիքավոր 225 համայնքների համար սուբսիդավորումը կատարվում 6 տոկոսային կետին համարժեք մասով: Վարկերը տրամադրվում են 2 տարի ժամկետով, առավելագույն գումարը 3.0 մլն դրամ: Ինչպես տոկոսադրույքի, այնպես էլ մայր գումարի մարման համար սահմանված է արտոնյալ ժամկետ առնվազն 6 ամիս: 2011թ. ապրիլից մինչև 2014 թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում տրամադրվել է 62.1 մլրդ դրամի շուրջ 70.7 հազ. վարկ, սուբսիդավորման գումարը նշված ժամանակահատվածում կազմել է 1.89 մլրդ դրամ: Ծրագիրը շարունակվում է:

Գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածություն

Նախարարության կողմից մշակվել է Հայաստանի Հանրապետությունում հացահատիկահավաք կոմբայնների ներկրման և շահագործման հայեցակարգային մոտեցումները և ներկայացվել է ՀՀ կառավարություն: Կարևոր ուշադրություն է դարձվում գյուղատնտեսական տեխնիկայի թարմացմանը: ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ գյուղատնտեսական տեխնիկա արտադրող բելառուսական ընկերությունների հետ բանակցությունների արդյունքում 2013-2014 թվականներին հանրապետություն է ներկրվել և ՓՄՁ ԶԱԿ-ի միջոցով ուղղակի վաճառքի ու լիզինգային եղանակով շուկայականից անհամեմատ ցածր գներով տնտեսվարող սուբյեկտներն և անհատներին է տրամադրվել 220 հատ <<ՄՏԶ 82.1>> մակնիշի տրակտորներ և 130 հատ գյուղատնտեսական տեխնիկա: ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ»- ի միջոցով 2012-2013 թվականներին հանրապետություն է ներկրվել և համայնքային արոտօգտագործողների միավորումներին ու գյուղատնտեսական աջակցության կենտրոններին է հատկացվել շուրջ 367 անվանում տրակտորներ և այլ գյուղատնտեսական տեխնիկա:

ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից աշխատանքներ են իրականցվում 4 միավոր հացահատիկահավաք կոմբայններ և 80 տրակտորներ ներկրելու ուղղությամբ:

Անտառային տնտեսություն

Անտառաբուծության ոլորտում մի շարք գործառույթների հստակեցման նպատակով նախարարության կողմից մշակվել է <<Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության մի շարք որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծեր:

<<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի եկամուտների հաշվին 2014 թվականի առաջին կիսամյակում հիմնադրվել է 0.5 հա տարածքով տնկարան, շուրջ 41 հա-ի վրա իրականացվել է նախկինում հիմնված անտառմշակույթների լրացում, իսկ 10.5 հա-ի վրա՝ խնամք:

ՀՀ կառավարության 2014 թվականի հունիսի 12-ի N598-Ն որոշմամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը հատկացվել է 61,9 մլն.դրամ 66 հա անտառապատման աշխատանքներ իրականացնելու համար:

Անտառապահախմբերի աշխատակիցների կողմից ապօրինի հատված 278 ծառերի վերաբերյալ կազմվել են 50 արձանագրություններ:

Իրացվել է 361 խմ շինափայտ, 4943 խմ վառելափայտ և 66 խմ տախտակ՝ 61,9 մլն դրամ գումարով:

<<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի 6 մասնաճյուղերում արբանյակային պատկերների վերածնման արդյունքում բացահայտված անտառածածկի փոփոխությունների հիման վրա կատարվել են դաշտային դիտարկումներ և կազմվել է համապատասխան արձանագրություններ:

Լիցենզավորման ոլորտ

2014 թվականի առաջին կիսամյակում տրամադրվել է 18 լիցենզիա բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների վաճառքի և 6 լիցենզիա՝ թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն իրականացնելու համար: Հատկացվել է նաև անասնաբուժության բնագավառում օգտագործվող պատվաստանյութերի և ախտորոշիչ միջոցների պետական գրանցման 27 հավաստագիր: 2014 թվականի առաջին կիսամյակում պետական տուրք է գանձվել 250.3 մլն դրամի:

Նշվածի հետ մեկտեղ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են նաև մի շարք ծրագրեր և միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են ոլորտի կարողությունների ընդլայնմանը և կայունացմանը:

Գյուղատնտեսության առանձնահատկություններից ելնելով՝ ոլորտի տնտեսական ցուցանիշների մասին իրական պատկեր կունենանք տարեկան արդյունքներն ամփոփելուց հետո:

Իրականացված աշխատանքների հետ մեկտեղ ոլորտի առջև դեռևս ծառացած են բազմաթիվ խնդիրներ, որոնք հիմնականում հետևյալն են:

1. Կարևոր է համարվում սկսված ծրագրերի շարունակումը և տարվա արդյունքներով նախատեսված ցուցանիշների ապահովումը:
2. Խնդիր է գյուղատնտեսության արդյունքներն ապահովող բերքահավաքի գործընթացին աջակցությունը, մասնավորապես հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի ժամկետներով պայմանավորված տեխնիկայի տեղաբաշխման, բուսաբուծական մթերքների իրացման գործընթացին աջակցությունը, արտահանման խթանումը:
3. Առանձնակի կարևորվում է գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ընկերությունների կողմից մթերումների նախապատրաստման, այդ բնագավառում պայմանագրային հարաբերությունների ընդլայնման աջակցությունը և արդյունքում մթերումների գործընթացի սահուն կազմակերպումը:
4. Կկարևորվի գյուղատնտեսությունում օգտագործվող առաջնահերթ ռեսուրսների (հանքային պարարտանյութերի տարբեր տեսակներ և դիզելային վառելանյութի) մատչելիության բարձրացման աջակցության ծրագրերի ընթացքի ապահովումը և տարվա կտրվածքով նախատեսված մատակարարումների ծավալների ապահովումը:
5. Հողային ռեսուրսների նպատակային օգտագործման վիճակի բարելավման, հացահատիկային մշակաբույսերի ինքնաբավության մակարդակի բարձրացման առաումով կարևորվում է աշնանանցան ցորենի սերմնաբուծության, սերմապահովության, սահմանամերձ ու բարձր լեռնային բնակավայրերի հացահատիկային մշակաբույսերի սուբսիդավորման ծրագրերի իրականացումը:
6. Առաջնահերթ խնդիր է համարվում անասնաբուծության տոհմային գործի կազմակերպումը, մասնավորապես, գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավումը, արհեստական սերմնավորման գործընթացում արդյունավետ մեխանիզմների և տեխնոլոգիաների ներդրումը:
7. Կարևոր խնդիր է մարդկանց և կենդանիների համար վտանգավոր համարվող հիվանդությունների դեմ հակահամաճարակային միջոցառումների շարունակումը և

նախատեսված կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումների ծավալների ապահովումը և դրասնց իրականացման մեխանիզմների կատարելագործումը:

8. Գյուղատնտեսության խնդիրների լուծման առումով կարևորվում է վարկերի մատչելիության բարձրացման ծրագրերի շարունակումը, մասնավորապես վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի երկրորդ փուլի իրականացումը և այդ ծրագրի շարունակականության ապահովումը՝ ընդլայնված ծավալներով և կատարելագործված մեխանիզմներով:
9. Առաջնահերթ խնդիրներից է տնտեսավարման ձևերի կատարելագործումը, մասնավորապես գյուղատնտեսությունում կոոպերացիայի, տնտեսավարողների համատեղ գործունեությունը խթանելու մեխանիզմների ներդրման միջոցով՝ արտադրության արդյունավետության բարձրացումը:

   Անասնապահության ճյուղի զարգացման, բնական կերահանդակների արդյունավետ օգտագործման, տնտեսավարման կոոպերատիվ ձևի առավելությունների օգտագործման առումով կարևորվում է <<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> ծրագրի շարունակումը և ծրագրի երկրորդ փուլի նախապատրաստումը:

10. Առաջնահերթ խնդիր է նաև գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման համար նախադրյալների ստեղծումը և քայլերի ձեռնարկումը:
11. Կարևորվում է գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածության, մասնավորապես մատչելի պայմաններով գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման աշխատանքների կազմակերպումը:

Խնդիրներների շրջանակը նշվածով չի սահմանափակվում, դրանք առավել շատ են և իրենց հետևողական լուծումներն են պահանջում:

Հարգելի պարոն նախարար, կոլեգիայի հարգելի անդամներ, վերջում ցանկանում եմ նշել, որ թեև ընթացիկ տարում բնության արհավիրքները /ցրտահարություն,կարկտահարություն/ որոշակի վնաս հասցրեցին երկրագործությանը, այնուամենայնիվ առաջին կիսամյակի արդյունքները բավականին հուսադրող են և ՀՀ կառավարության կողմից ցրտահարության հետևանքների մեղմանն ուղղված նախաձեռնությունները հույս են ներշնչում,որ ընդհանուր առմամբ 2014 թվականը կհանդիսանա հաջողված գյուղատնտեսական տարի:

Շնորհակալություն